Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Lehrbuch Urgeschichte

Fr. Klaus Graupner

Berlin 1904

616.9
U-88

19 NOV 2011

...ամ «ԱՌՈՂՋԱՊԱՀԻՆ ԹԵՐԹ»-ի

— 88
368

ԲԺ. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԺՇԿԻ ՁՐՈՅՑՆԵՐ

ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

№ 13 1904

616.9
Ա-88

ԱՌԱՆՁԻՆ—ԳԻՆՆ է 15 ԿՈՊ.

9
-88
1833
РН
35016

Երկրորդ անգամ լաւելուած «Առողջապահիկ Թերթ»-ի

ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ № 13

ՀԱՄԱՌՕՏ ՀԱՆՐԱՄԱՏՉԵԼԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ

Գլխաւորապէս Կովկասի հասարակ ժողովրդի համար

Կազմեց Դ-ր. ՎԱՀԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրուած ժողովրդական բժշկական - առողջապահիկ գրուածների խմբագրական մասնաժողովի նախագահ Բժշ. Ա. Բաբայեանի կողմից։

Այս հեղինակութիւնը արժանացել է Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեանը կտակած Քեթխուդեանի մրցանակին։

ԹԻՖԼԻԶ 1904 Թ.
Տպարան „ՀԵՐՄԷՍ“ Մաղաք. փող. № 15.
(32)

Հ.Դ.Ս. ՀԱՅՐԱՏԱՐԱՆ ՕԳՈՒՏ
Ա. ԲԱԲԱ ԱԼԱ Ա. Ա. Բ.
ОБЩЕННЫЙ ФОНД
Հ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ

22 FEB 2013

6691

Дозволено цензурою. Тифлисъ, 24-го іюля 1904 г.

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Est. Библиотека
ՀՍՍՀ Գ.Մ.Հ.Հ.
Ս. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна

3429-84

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Երբ մի երկրի վրա մի անբաղդութիւն է վրա տալիս, ժողովուրդը չպէտք է ձեռները խաչի ու ասի. «Աստծու կամքն է»։ Երբէ՛ք չպէտք է մոռանալ այն իմաստալից ասացուածքը, թէ «Աստծու վրա յո՛յս դիր, բայց ինքնդ էլ անգործ մի՛ մնար»։ Պէտք է յիշել եւ այն միւս առածը, թէ «ի՛նքդ քեզ օգնիր, որ Աստուած էլ քեզ օգնի»։ Պիտի մեր բոլոր ոյժերը հաւաքենք խոլերայի դէմ կռուելու համար, որովհետեւ սա մի վարակիչ հիւանդութիւն է եւ սարսափելի կոտորածներ է անում ամեն դասակարգի մարդկանց մէջ։

Կռուել այս հիւանդութեան դեմ երկու կերպ կարելի է. կամ պաշտպանելով հիւանդակութիւնը եւ ինքնիրան վարակուելուց ու հիւանդանալուց, կամ (եթէ, Աստուած չանի, մէկը հիւանդանա) իսկոյն բժշկութեան դիմելով։

Սանկտ Պետերբուրգ

Այս գրքոյկի նպատակն էլ մէկ այն է, որ ցոյց տանք, թէ ի՛նչ ձեւով պէտք է պաշտպանել ժողովրդին եւ ամեն մէկին վարակումից եւ թէ ի՛նչպէս բժշկուել, եթէ տեղը բժիշկ չկայ։

Բայց այդ սարսափելի աղէտի հետ կռուելու համար անհրաժեշտ է ամենից առաջ ծանօթանալ նրա հետ։

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1. ՄԻՔԱՆԻ ԽՕՍՔ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՂԱԾ ԽՈԼԵՐԱՅԻՆ ՀԱՄԱՃԱՐԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Խոլերայի բունը համարւում է հեռաւոր Հնդկաստանը, իսկապէս Հնդիկների սրբազան Գանգէս գետի ափերը։ Այս պատճառով էլ այդ հիւանդութիւնը յայտնի է հնդկական կամ ասիական խոլերա անունով, որով նա զանազանւում է եւրոպական կամ մանկական խոլերայից։ Այս երկուսը ո՛չ մի կապ չունեն իրար հետ եւ տարբեր պատճառներից են առաջ գալիս։ Բացի դրանից, մանկական խոլերան երբէք համաճարակի ձեւ չի ստանում։ Գանգէս ու Բրահմապուտրա գետերի ափերին տարին-տասն երկու ամիս խոլերան ճարակում է ժողովրդին, երբեմն թուլանալով, երբեմն սաստկանալով ու բռնկուելով մեծ ուժով։ Այդ տեղերից հիւանդութիւնը սարսափելի արագութեամբ փոթորիկի նման անցնում է ամբողջ երկրների

վրայով, թափանցելով աշխարհիս ամենահեռաւոր անկիւնները և տանելով իր հետ հազարաւոր ու հարիւր հազարաւոր կեանքեր։ Մեր երկիրը (Կովկասը) անցեալ դարում միքանի խոլերային համաճարակներ է տեսել, նրանցից միքանիսը զարհուրելի ուժով բռնկուեցին, միւսները աւելի թոյլ էին։

Մեր երկրի պատմութիւնը յիշատակում է այս դարում մի շարք խոլերային համաճարակներ։ Առաջինը եղաւ 1823 թուին Սալիանում, այդ տեղ մի ինչ-որ անյայտ ցաւից հէնց առաջին օրը մեռան եօթ մարդ։ Այս հիւանդութիւնը եկել էր Պարսկաստանից, Տալիշինեան խանութիւնից և սկսել էր կոտրածներ անել Կասպից ծովի ափերում։ Այդ ժամանակ հիմնուեց Կովկասում առաջին կարանտինը *) Բաքուում և Լէնքորանում պարսկական ծովափից եկած ապրանքների ու նաւերի համար։

Հազիւ հինգ տարի էր անցել, երբ 1828-ին Բաղուի շրջանում բռնկուեց երկրորդ համաճարակը։ Հետևեալ տարին խոլերան մտաւ հիւսիսային Կովկաս. իսկ 1830-ին, յունիսի

*) Տես էջ...

27-ին երևեցան առաջի դէպքերը Թիֆլիզում։ Այն ժամանակուա զինուորական նահանգապետ գեներալ Սորիկալովը շատ խիստ միջոցներ ձեռք առաւ ցաւի տարածուելու դէմ, բայց այդ միջոցները բաւարար չէին։ Նա ի միջի այլոց գանգատուում էր գլխաւոր հրամանատար գրաֆ Պասկեվիչին, թէ «բժիշկների պակասութիւն կայ, որովհետև եղածներից երկուսը ուրիշ տեղ են ուղարկուած, իսկ մնացածներից էլ երկուսը արդէն մեռել են»։ Այս համաճարակը այնքան սաստիկ էր, որ քաղաքը ամայի դարձաւ,—մնացել էին միայն ծառայողները և աղքատները, որոնք միջոց չունէին փախչելու։ Պասկեվիչն ինքը քաջալերում էր ժողովրդի փախուստը. նա փակեց բոլոր կառավարչական տեղանները։ Փախչողները, ի հարկէ, տարածեցին հիւանդութիւնը շրջակա գաւառները։ Այս համաճարակը ահագին աւերումներ արեց. միայն Թիֆլիզ քաղաքում 53 օրուա մէջ խոլերայից մեռան 3,000 մարդ. ուրեմն 10 հոգուց մէկը, որովհետև այդ ժամանակ քաղաքում հազիւ 30,000 բնակիչ լինէր։ Այս պատճառով էլ այս համաճարակը յայտնի է մեր մէջ «մեծ խոլերա» անունով։ Երրորդ համաճարակն սկսուեց Ախալցխայի գաւառում 1839 թուին,

յետո 1840-ին երևայ Ալեքսանդրապոլում, իսկ հետևեալ 41 և 42 թուականներին տարածուեց Երևանի ու Շիրվանի գաւառները, բայց շնորհիւ ձեռք առած միջոցների, Թիֆլիզ չհասաւ։

«Մեծ խոլերայից» պակաս սաստիկ չէր նաև այն համաճարակը, որը բռնկուեց 1847 թուականին։

Այդ տարուա յունիս ամսին անտանելի շոգ էր և խոլերան ամբողջ երկրում զարհուրելի ծաւալ ստացաւ ու զոհերի թիւը սկսեց արագութեամբ օրէցօր աճել։ Այս համաճարակը այնպիսի սարսափ գցեց, որ Ներսէս Հինդերորդ կաթողիկոսի հրամանով ամեն օր եկեղեցիներում մաղթանքներ են կատարւում և պատարագ մատուցանւում։ Ամենքը հաղորդւում էին, որովհետև ոչ ոք չէր կարող յուսալ, թէ եղուց կենդանի կլինէր։ Եւ, յիրաւի, ականատեսների ասելով, հիւանդութիւնը սպանում էր իր զոհին $^1/_4$—$^1/_2$ ժամուա մէջ. զոհերի թիւը օրական հարիւրի էր հասնում։

Հետևեալ համաճարակները աւելի թեթև անցան, թէև դարձեալ բաւականին զոհեր տարան։ Շատ վնասուեցին ռուս զօրքերը 1855 թուին, թուրքերի հետ պատերազմելու ժամանակ։ 1857-ին խոլերան դարձեալ Պարսկաստանից անցաւ ու հասաւ Թիֆլիզ. յետո մի քանի տարի դադարեց և նորից երևայ 1865—66 թուականներին, բայց այս անգամ նա եկել էր Ռուսաստանից, որտեղ նա աւերումներ գործեց մինչև 1870 թուականը։ Ամենից առաջ համաճարակը երևայ Կուբանի շրջանում։ Կարճ ժամանակից յետո Փոթին ու Բուրայիսը երթարկուեցին այդ ցաւի սոսկումներին և յաւն արագութեամբ տարածուեց ու ճարակեց մինչև Թիֆլիզ, Գանձակ ու Շուշի ու մոտաւ Բագուի նահանգը։ Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, 1871 թուին մեռան խոլերայից 2124 հոգի. բայց այդ թիւը անտարակոյս պակաս է իսկականից։

Այնուհետև մինչև 1892-ը այլևս խոլերայի մասին ձայն չկար, երբ յանէարծ նա բռնկուեց Բագուում, ուր բերուել էր Պարսկաստանից Անդրկասպեան երկրի վրայով։

Այս համաճարակը դեռ թարմ է ամենքի յիշողութեան մէջ։ Բագուից նա անցաւ Թիֆլիզ. իսկ այստեղից ճիւղաւորուելով, մի կողմից հասաւ Բաթում ու Սև ծովի ափերը, իսկ միւս կողմից Երևանի նահանգն ու Կարսի շրջանը։ Այս վերջին խոլերայի գլխաւոր օջաղները

զարձան Բաղուն ու Երևանը, որտեղ շատ մարդ կոտորուեց և աւելի շատ կկոտորուէր, եթէ կառավարութիւնն ու քաղաքային վարչութիւնները խիստ միջոցներ ձեռք առած չլինէին։

---

2. Ի՞ՆՉ Է ԽՈԼԵՐԱՆ ԵՒ ՄԱՐԴԻԿ Ի՞ՆՉՊԷՍ ԵՆ ՎԱՐԱԿԻՈՒՄ

Խոլերան մեծ վարակիչ զօրութիւն ունի։ Այս պատճառով էլ նա այդպէս արագ անցնում է գիւղից-գիւղ, քաղաքից—քաղաք և կարճ ժամանակում դառնում է սարսափելի համաճարակ, այսինքն. հեղեղում է ամբողջ երկրներ ու պետութիւններ։

—«Իսկ ի՞նչ կերպ է տարածւում այդ հիւանդութիւնը», կհարցնի ընթերցողը։

Ենթադրենք, թէ մի որևէ տեղ, օր. Ռէշտում (Պարսկաստանում) խոլերա կա։ Ամենքը գիտեն, որ այդ քաղաքից նաւերով մարդկանց ու ապրանքներ են բերում Բաղու։ Ահա՛ այդ նաւերից մէկի վրա գալիս է խոլերայով հիւանդ մի մարդ ու դուրս է գալիս Բաղու։ (Սակայն իսկի անհրաժեշտ էլ չէ, որ եկողն ինքը հիւանդ լինի. բաւական է, որ նրա մահիճաշի

կամ արկղի մէջ մի խոլերայով հիւանդին պատկանող իրեր դտնուեն, օրինակ. նրա սպիտակեղէնը կամ հագուստը)։ Ենթադրենք, որ այդ եկուորն իջնում է իր ազգականների կամ ծանօթների մօտ և այնտեղ մնում է 2—3 օր և յանկարծ երրորդ կամ չորրորդ օրը սարսափով նկատում են, որ տնեցիներից մէկը լուծ է ընկնում, փսխում է և մահուան գուռն է հասնում։ Կանչում են բժշկին և սա յայտնում է, թէ հիւանդը խոլերա է ընկել.—«Ի՞նչպէս թէ խոլերա, ո՞րտեղից եկաւ», զարմանքով հարցնում են տնեցիք ու սարսափահար եղած, հազար ու մէկ կերպով ցայտարում, թէ ի՞նչպէս հիւանդացաւ այդ խեղճը։ Բայց բժիշկը հարցուփորձ է անում և իմանում, որ վարակումն եկել է Ռաշտից, որտեղ համաճարակ կա։

Այդ դեռ բոլորը չէ։ Հիմի աւելի հեռու գնանք։ Ցիշած հիւանդին մօտիկ մարդկանցից մէկը ուղղակի Բաղուից գնում է Բաթում առանց թիֆլիզում կանգ առնելու և յանկարծ Բաթումի մէջ էլ խոլերայի դէպքեր են յայտնվում։ Ի՞նչպէս պատահեց այդ։ Ահա՛ թէ ինչպէս։ Այն մարդը թոյնը ստացել էր Բաղումի առաջին հիւանդից, բայց դեռ ևս այդ թոյնը

այնքան չէր աճել նրա մարմնի մէջ, որ հիւանդացնէր նրան. միքանի օր պէտք է անցնէր։ Այդ միքանի օրուա մէջ նա առողջ էր մնացել, իսկ մինչև Բաթում հասնելը վարակը (վարակիչ թոյնը) զօրեղացել էր նրա մէջ ու հիւանդացրել նրան։ Ցեռոյ այս հիւանդից վարակւում են ուրիշները, ու այդ մարդի շուրջը երևում են մի շարք խոլերային դէպքեր և այդպիսով Բաթում քաղաքում ծագում է ու տարածւում խոլերային համաճարակը, թէև, կրկնում ենք, Բագուի ու Բաթումի մէջ ո՛չ մի հիւանդական դէպք պատահած չէ։

Կարող է պատահել նաև այսպէս. ոչ մի մարդ չի եկել վարակուած տեղից այս ինչ քաղաքը, բայց էլի խոլերան երևում է։ Ի՞նչպէս է լինում այդ։ Հետազօտեցէ՛ք և կիմանաք, որ թէև ո՛չ-ոք չի եկել, բայց դրա փոխարէն վարակուած տեղերից բերուած են քաղաք զանազան ապրանքներ և վարակիչ թոյնը դրանց հետ է ներս մտել։

Այստեղից պէտք է եզրակացնենք այն, որ եթէ մի տեղ խոլերա է երևում, պէտք է համոզուած լինենք, որ նա ինքնիրան չի ծագել, այլ բերուած է կամ մարդկանց կամ ապրանքների միջոցով։

Եւ, յիրաւի, եթէ հետևենք խոլերային համաճարակների ընթացքին, կտեսնենք, որ այս հիւանդութիւնը տարածւում է երկաթուղիների գծով, գետերի ու ծովերի ափերով և առհասարակ հաղորդակցութեան ճանապարհներով (որոնցով մարդիկ կամ ապրանքներ են տեղափոխւում) և այդ տեղերից միայն մնում երկրի խորքերը։

Մեր բոլոր ասածները ապացուցում են այն, ինչ որ վերևն ասեցինք, այն է. խոլերան տարածւում է անմիջական վարակումից թէ՛ մարդկանց եւ թէ՛ վարակուած իրերի միջոցով։ Այդ բանի ապացոյցներից մէկն էլ այն է, որ եթէ շրջապատենք մի որևէ գիւղ կամ քաղաք շղթայով այնպէս, որ ո՛չ-ոք ներս չմտնի, նոյնպէս և ոչ մի բան չընդունենք դրսից, այդ գիւղում ու քաղաքում ո՛չ մի մարդ չի հիւանդանա, թէկուզ չորս կողմը խոլերան կոտորած անի։

---

3. ԽՈԼԵՐԱՅԻ ՎԱՐԱԿԸ (ԹՈՅՆԸ) ԿԱՄ ՄԻԿՐՈԲԸ

Մենք շատ անգամ գործ ենք ածել վարակ, թոյն եւ վարակումն բառերը։ Այժմ տես-

նենք, թէ ի՞նչ են նշանակում դրանք։

Վարակը մի կենդանի թոյն է, որը մտնելով մեր մարմնի մէջ, թունաւորում է մեզ։

Մենք շատ թոյներ ենք ճանաչում. մկընդեղն էլ թոյն է, սնդիկն էլ թոյն է, օպիումն էլ։ Սրանք բոլորը կարող են թունաւորել մեզ միմիայն այն ժամանակ, երբ նրանցից որոշ քանակութեամբ ենք կուլ տալիս, իսկ եթէ քիչ չափով ընդունենք, ո՛չ մի վնաս չի հասնի մեզ, մինչև անգամ օգուտ էլ է, որովհետև դրանք դեղեր են որոշ հիւանդութիւնների դէմ։

Խոլերայի թոյնը դրանց նման չէ։ Նրա ամենաչնչին մասնիկն էլ ընկնելով մեր կազմուածքի (մարմնի) մէջ, կարող է սարսափելի արագութեամբ աճել ու թունաւորել մեզ։

Մի ուրիշ զանազանութիւն էլ կա։ Երբ հասարակ թոյներից մի մարդ որոշ չափով ընդունի, նա կամ կմեռնի կամ ոչ, և վերջացաւ, էլ ուրիշների վրա ո՛չ մի ներգործութիւն չի անի։ Ուրեմն թոյնը անհետանում — կորչում է առաջին հիւանդի մէջ։ Այնինչ խոլերայի թոյնը չի անհետանում հիւանդի մեռնելուց յետո էլ, և կարող է նրանից անցնել (փոխուել) ուրիշներին և նրանց էլ սպանել։

Ուրեմն խոլերայի վարակը մի առանձին տեսակի թոյն է, որը միշտ շատանում է, աճում է հիւանդի մարմնի մէջ եւ մէկից դուրս գալով ուրիշներին էլ է վարակում։ Մի խօսքով սա մի կենդանի թոյն է։

Ի՞նչ է այս կենդանի թոյնը։

Մինչև 1883 թուականը մեծ գիտնականներից անգամ ո՛չ-ոք չէր կարող այս հարցին պատասխանել, բայց այս տարում գերմանացի յայտնի գիտնական Կոխ մեծացնող ապակիների (մանրացոյցի) միջոցով դուռ խոլերայով հիւանդների կղկղանքի (դուրս գնացածի) ու փսխանքի մէջ առանձին չափազանց մանր էակներ (սունկեր), որոնք առանց մանրացոյցի չեն երևում և որոնք խոլերայի իսկական պատճառներն են։ Սրանց անունը դրեցին խոլերային մանրիկ կամ միկրոբ. ասում են նոյնպէս խոլերային ցուպիկ կամ խոլերային ստորակէտ։ Այդ գիւտից յետո գիտնականների ստոյգ բազմութիւնները ապացուցեցին, որ հէնց այդ անտեսանելի մանր էակներն են խոլերայի վարակը. դրանք են, որ աճելով մեր մարմնի մէջ, սպանում են մեզ։

Եթէ խոլերայով հիւանդի նոր փսխածից կամ

դուրս գնացածից մի կաթիլ դնենք մանրացույցի ապակու վրա ու նայենք, կտեսնենք որ խոլերայի ցուպիկները շարժվում են։ Գիտնականները մինչև անգամ կարողացան տեսնել, թէ ինչ կերպ են աճում ու բազմանում նրանք։ Եւ տեսան մի զարհուրելի բան, այն է. որ նրանցից ամեն մէկից մի օրուա մէջ կարող է գոյանալ մի քանի միլիոն։ Բայց մի տեղ միայն նրանք չեն կարողանում աճել, այլ ոչնչացնում են. դա ստամոքսի թթու հիւթն է։ Այս պատճառով էլ չպէտք է գործ ածել աղային ուտելիքներ ու խմելիքներ, որովհետև սրանք պակասեցնում և ստամոքսի հեւթի թթուն։

Ինչպէս միքանի թունաւոր սունկեր սարսափելի թոյներ են պարունակում իրանց մէջ, այնպէս էլ այդ անտեսանելի սունկիկները ակար մարդկանց ստամոքսի ու աղիքների մէջ աճելով արտադրում են մի զօրեղ թոյն, որը երբեմն մի քանի ժամուա ընթացքում սպանում է հիւանդին։

Խոլերային ցուպիկը զարգանում է ու աճում նոյնպէս և մեր կազմուածքից դուրս, այն է. ջրի մէջ, բոլոր ուտելեղէնների, կեղտի ու աղտի մէջ և առհասարակ խոնաւ ու կեղտոտ տեղերում, որտեղ նրանք պարարտ հող

են գտնում իրանց աճման համար։ Եւ, ընդհակառակը, մաքրութեան մէջ, լոյս և արևաշատ տեղերում նրանք չորանում են ու ոչնչանում։

Խոլերան, ճշմարիտ որ, աւելի զարգանում է այն երկրներում, որտեղ որ ժողովուրդը կեղտոտ է ապրում։ Եթէ համեմատենք հէնց միևնոյն քաղաքի գանազան մասերը, կտեսնենք, որ կեղտոտ թաղերում խոլերան աւելի զոհեր է տանում, քան մաքուր։ Ահա՛ թէ ինչի խոլերային սոսկալի ցուպիկները բուն են դրել, ինչպէս ասել ենք, Հնդկաստանում, Գանգէս գետի ափերում։ Այդտեղից ցուպիկները հիւանդների ու ապրանքների միջոցով անկոչ հիւրեր են դառնում մեր երկրներում։ Բարեբաղդաբար նրանք մեր բարեխառն կլիմայում չեն կարողանում ապրել։ Նրանք այնտեղերում են աւերածներ գործում, որտեղ ժողովուրդը կեղտոտ կեանք է վարում, իսկ մաքրասէր ժողովրդի մէջ նրանք կերակուր չեն գտնում ու ոչնչանում են։

4. ԻՆՉՊԷՍ Է ՄՏՆՈՒՄ ՄԵՐ ՄԱՐՄՆԻ ՄԷՋ ԽՈԼԵՐԱՅԻ ՎԱՐԱԿԻՉ ԹՈՅՆԸ

Խոլերայի թոյնը կարող է մտնել մեր մարմնի մէջ գլխաւորապէս ուտելիքի ու խմելիքի

Ա. Մաշտոցյան անվան

3429-84

հետ, նմանապէս և վարակուած փոշու (թոզի) հետ, որի մէջ խոլերային ցուպիկներ կան։ Կարելի է վարակուել նոյնպէս և դիպչելով այնպիսի առարկաներին, որոնք կեղտոտուած են հիւանդի արտաթորութիւններով ու փրսխուած քով։

Այն անձինք, որոնք խնամում են հիւանդին, նոյնպէս և նրանք, որոնք յարակցութիւն ունեն վարակուածների հետ, կարող են վարակուել այդ բոլոր միջոցներով։ Երբ մենք դիպչում ենք կամ ձեռ ենք տալիս խոլերային արտաթորութիւններով կեղտոտուած իրերին (բարձ, վերմակ, դօշակի սաւան, սպիտակեղէն), այն ժամանակ խոլերային անտեսանելի ցուպիկները կպչում են մեր ձեռներին և եթէ մենք անլուա հաց ուտենք, կամ ձեռներս բերաններս տանենք, կարող ենք կերակուրի հետ կուլ տալ այդ ցուպիկներն ու թունաւորուել։ Ահա՛ թէ ինչի հիւանդապահը չպէտք է անլուա ճաշի նստի, այլ վաղօրօք պիտի լաւ լուանա ձեռները սապոնով ու մաքուր տաք ջրով, իսկ յետոյ ախտահանի մի որևէ ախտահանիչ դեղով, որոնց մասին յետոյ կխօսենք։

---

5. Ի՞ՆՉՊԷՍ ԵՆ ՄԱՐԴԻԿ ՎԱՐԱԿՈՒՄ ՋՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Բացի անմիջական շփումից հիւանդի հետ, մարդ կարող է վարակուել խոլերայով նոյնպէս և ջրի միջոցով։

Անցեալ 1892 թուականին Երևանում կոտորուեց, ինչպէս ասում են, ազգաբնակութեան մի երրորդ մասը։ Ամբողջ քաղաքը սուգի մէջ մնաց։ Ո՛վ կարող էր—փախչում էր սարերը, իսկ խեղճ ժողովուրդը և յատկապէս աղքատ թուրքերը, որոնք կարելիութիւն չունէին փախչելու, սարսափելի քանակութեամբ կոտորուում էին։ Մահուան դէպքերը այնքան շատ էին, որ մարդ չէր ճնշել դիակները թաղելու համար։ Բազում նոյնպէս մեծ կոտորած եղաւ գլխաւորապէս բանուորների մէջ։

Իսկ Թիֆլիզում, որտեղ 150 հազար բնակիչ կար, հազիւ 100 մարդ մեռաւ։

Ինչի՞ց էր այդ ահագին տարբերութիւնը։ Ինչի՞ մի քաղաքում բնակիչների մի երրորդականն է մեռնում, իսկ միւսում հազիւ 1500-ից մէկը։

Ի հարկէ, դրա պատճառը Թիֆլիզի մաքրութիւնն էր, այնտեղի կեանքի աւելի լաւ

պայմանները։ Բայց գլխաւոր պատճառը այն էր, որ քաղաքում գործ չէին ածում կուր գետի ջուրը, այլ ջրանցքի ջուրը։ Այնինչ, Բաղում ու Երևանում խմելու ջուրը աղտոտուած էր խոլերային արտաթորութիւններով և, հետևապէս, վարակուած։ Ե., յիրաւի, Երևանում շատ փողոցների միջով անցնում են բաց ջրանցքներ, որոնց մէջ բնակիչները շատ անգամ (գիշերները) լցնում են իրանց կեղտաջրերը, նոյնիսկ աղտոտութիւնները։ Փողոցներից այս ջրերը մտնում են տների բակերը, որտեղ ժողովում են երբեմն աւազանների մէջ, ջրում են մարգերն ու այգիները։ Այս ջրանցքների ու աւազանների մէջ խոլերային տարին էլ (ինչպէս միշտ) բնակիչները լուանում էին խոլերահիւանդների սպիտակեղէնը, իսկ գիշերները թաքուն նոյնիսկ թափում էին հիւանդի աղտոտութիւններն ու աղբը։ Պարզ է, որ այդ ջրանցքների ջուրը սարսափելի կերպով աղտոտուած պիտի լինէր և պիտի առատութեամբ տարածէր խոլերան տնից-տուն, թաղից-թաղ, վերևից ներքև։ Բաղում էս խոլերայի այդքան ուժեղ լինելը կարելի է նոյնպէս մեծ մասամբ վերագրել վատ ջրին։

Առհասարակ խոլերան մեծ կոտորած է

անում այն տեղերում, որտեղ բնակիչները կեղտոտ գետի կամ ջրհորի ջուր են գործ ածում։ Ջրհորի ջուրը աղտոտւում է նրանից, որ խոլերայով հիւանդի արտաթորութիւնները առանց ախտահանելու թափում են գետին, ջրհորի մօտ, կամ երբ ջրհորը արտաքնոցների մօտ է, որովհետև այդ աղտոտութիւնները ծծւում են գետնի մէջ ու հասնում ջրհորի ջրին։ Այս հիմանվրա է, որ բժիշկները խորհուրդ են տալիս խոլերայի ժամանակ ծածկել այն ջրհորները, որոնք տների մօտ են։

---

6. ԽՈԼԵՐԱՅԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Թոյնը մեր մարմնի մէջ մտնելուց երկուերեք օր անցած, հիւանդութիւնը սկսում է իրան ցոյց տալ։ Գլխաւոր նշաններն են. փրսխում (սիրտ թափել) և փորլուծութիւն։ Ցանկարծ հիւանդը սկսում է միմեանց ետևից դուրս գնալ. լուծում է ջրալի և գնալով աւելի և աւելի յաճախ է դուրս գնում։ Այս փորլուծութիւնների ժամանակ, բացի թեթև ծակոցներից ուրիշ առանձին ցաւեր ստամոքսի մէջ չեն զգացւում։ Փորլուծութիւնը օրական

20—30 անգամ և նոյնիսկ դրանից էլ աւել է կրկնվում։ Դուրս գնացածը բոլորովին ջրալի է դառնում, նմանւում է բրնձաջրի։ Սրանից հիւանդը, ի հարկէ, սաստիկ նեղանում և քամւում է, որովհետև այդ փորլուծութիւնը խլում է նրանից բոլոր հիւթերը, մանաւանդ որ փորլուծութեան հետ միասին անդադար փսխումն է լինում։

Այսպիսով մարմնի հեղուկը անդադար ահագին չափերով կորչում է, որից հիւանդի արիւնը թանձրանում է, իսկ այս պատճառից առաջանում է այն բանը, որ հիւանդի կաշին չորանում է ու սառչում, մէզը պակասում է և նոյնիսկ բոլորովին կտրւում։ Երբ բանն այստեղ է հասնում, սկսւում են ծանր երևոյթներ. հիւանդի շնչառութիւնը դժուարանում է, կուրծքը կարծես ճնշւում է, ամբողջ մարմինը, մանաւանդ ձեռներն ու ոտները սառչում են։ Անդամները ամեն րոպէ սաստիկ ձգձգւում են, անտանելի ցաւեր պատճառելով հիւանդին։ Արագ կերպով, 2—3 օրուա, յաճախ էլ միքանի ժամուա ընթացքում հիւանդը սարսափելի կերպով լղարում է. մարմնի ամբողջ կաշին չորանում է և մագաղաթի պէս դառնում. աչքերը խոր են ընկնում, ձայնը խռպոտ է դառնում ու թոյլ, լեզուն փայտանում է, բերանը սաստիկ չորանում։ այս դրութեան մէջ վրա է հասնում մահը։

Բարեբաղդաբար, ամեն հիւանդի ճակատին անխուսափելի մահ չի գրուած։ Շատերը առողջանում են կամ այն պատճառով, որ ժամանակին բժշկական օգնութիւն են ստանում կամ թէ այն պատճառով, որ հիւանդը պինդ ու առողջ կազմուածք ունենալով, աջողութեամբ կարողանում է դիմադրել թոյնին և յաղթում է։

Առողջանալու դէպքում փորլուծութիւնը և փսխումը կանգ են առնում, ջղերի կծկուելը դադարում է. միանգամից առատ քրտինք է վրա գալիս, մէզը բացւում է, աչքերը նորից իրանց առաջուա փայլն են ստանում, բերանը ջրակալում է և հիւանդը արագ լաւանում։

Խոլերան, ի հարկէ, միշտ այսպիսի խիստ ձևով չի արտայայտւում։ Նրա նշանները առհասարակ փոփոխական են։ Մի տեսակ հիւանդացողներ միայն թեթև փորլուծութիւն և փսխում են ունենում. այսպիսի խոլերան ուրիշ անուն ունի—խոլերինա։ Միւսները աւելի ծանր փորլուծութիւններ են ունենում և նոյնիսկ ջղաձգութիւն էլ է լինում նրանց ան-

դամների մէջ. վերջապէս հիւանդացողների մի մասն էլ վերջում նկարագրուած ահաւոր երևոյթներն են ունենում: Միայն չպէտք է մոռանալ, որ խոլերայի համաճարակի ժամանակ ամեն մի, նոյնիսկ թեթև, ստամոքսային խանգարումը (փորլուծութիւնը) պէտք է բժշկել ինչպէս խոլերա. որովհետև այդ տեսակ հիւանդների լուծածի և փսխածի մէջ նոյնպէս գտնւում է խոլերայի կենդանի թոյնը, որը կարող է վարակում տարածել և հիւանդացնել շատերին խոլերայի ծանր տեսակով: Ուստի և արդարացի է մի գիտնական, որ ասել է. «Աւելի լաւ է հարիւր փորլուծութիւն խոլերայի տեղ ընդունել, քան թէ մի խոլերան հասարակ փորլուծութեան տեղ»:

7. Ո՞Վ ԲԵՐ ԵՆ ԱՒԵԼԻ ՑԱԾԱԽ ՀԻՒԱՆԴԱՆՈՒՄ ԽՈԼԵՐԱՅՈՎ

Խոլերան միշտ շատ զոհեր է տանում աղքատ մարդկանց շրջանից, որովհետև աղքատ մարդիկ վատ են կերակրւում, ուժասպառ են դառնում աշխատանքից և խմբուած են խոնաւ ու կեղտոտ բնակարաններում:

Այս պատճառով խոլերայի ժամանակ բանուորներն ու աղքատ մարդիկ պիտի հեռանան իրանց խոնաւ բնակարաններից, նկուղներից: Ամառ ժամանակ գիւղերում աւելի լաւ է վրաններ սարքել և ապրել նրանց մէջ, քան թէ մնալ մեր ողորմելի գիւղերի ստորերկրեա խրճիթներում:

Թոյլ, հիւանդ, վատ կերակրուող մարդիկ հեշտ են թոյնը ընդունում իրանց մէջ և դժուար են առողջանում, քան թէ առողջ և լաւ կերակրուող մարդիկ: Այս պատճառով ամեն մէկը, վարակմանը ուժեղ կերպով դիմադրելու համար պարտաւոր է, ինչպէս էլ լինի, լաւացնել իր սնունդը և՛ ամբողջ ապրուստը: Միևնոյն ժամանակ նա պիտի շատ ծանր աշխատանք չունենա, պիտի հեռու պահի իրան հոգեկան յուզմունքներից և առհասարակ ա՛յն բոլոր բաներից, որոնք մարդի թուլացնում և ուժասպառ են դարձնում:

Հիւանդանում են և նրանք, որոնք խանգարում են իրանց ստամոքսը առատ ճաշերով և արբեցողութեամբ, որովհետև խանգարուած և հիւանդ ստամոքսի մէջ վարակման թոյնը աւելի է զարգանում: Ցաւալի է, օրինակ, որ տօներին հեռւող օրերը (գլխաւորապէս երկուշաբթի և երեքշաբթի) խոլերայով հիւան-

դայլոնների թիւը աւելանում է։ Սրա պատճառն այն է, որ կիրակի օրերը բանուորները քէֆ են անում, խմում են և խանգարում են իրանց սառմոքը։

Այսպեղից մի խրատ—խոլերային համաշնարակների ժամանակ երբէք չպէտք է քէֆեր սարքել եւ արբեցողութիւն անել։

Հեշտ են հիւանդանում և վախկոտ մարդիկ։ Սա էլ հասկանալի է։ Այդպիսի մարդիկ շարունակ ահ ու երկիւղի մէջ են, թէ կհիւանդանան այդ սարսափելի հիւանդութեամբ, որից, նրանց կարծիքով, ազատուելու ճար չկա, այսպիսով նրանք զրկում են քնից և հանգստութիւնից։ Բացի դրանից, ամեն տեղ և ամեն բանի մէջ վարակում տեսնելով, նրանք վախենում են նոյնիսկ ուտելուց և խմելուց, սոված են մնում և այսպիսով ոյժից ընկնում են։ Այդ վախկոտները հէնց որ մի ամենաթեթև ցաւ են զգում սառմոքի մէջ, յուսահատւում են և իրանց կորած են համարում։ Այս բոլորը թուլացնում է նրանց մարմինը. իսկ թոյլ մարմինը, ինչպէս ասացինք վերևում, հեշտ է հիւանդանում։

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԽՈԼԵՐԱՅԻՑ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

I. Ի՞նչ միջոցներ է ձեռք առնում կառավարութիւնը խոլերայի դէմ։

Հարևան պետութիւնների մէջ խոլերա երևալուն պէս ամեն մի կառավարութիւն, իր երկիրը խոլերա մտցնելուց պահպանելու համար, ձեռք է առնում հետևեալ միջոցները.

1. Կարանտին, շրջափակում կամ կորդոն։ Երբ կառավարութիւնն իմանում է, որ հարևան պետութիւնների մէջ (օրինակ. Պարսկաստանում կամ Թիւրքիայում) խոլերայի դէպքեր են երևացել, նա խիստ միջոցներ է ձեռք առնում, որպէսզի այդ տեղերից ո՛չ-ոք չանցնի սահմանը և իր հետ վարակիչ հիւանդութիւնը չբերի մեզ մօտ։ Այս նպատակով բոլոր ճանապարհորդները, որոնք գալիս են վարակուած տեղերից, արգելւում են սահմանի վրա 10—15 օր փորձելու համար։ Եթէ

այդ ժամանակ արգելուածների մէջ ո՛չ-ոք չի հիւանդանում, նրանց բոլորին թողնում են, հակառակ դէպքում, նրանց էլի երկար պահում են, մինչև որ համոզուեն, որ նրանց մէջ այլևս խոլերայով վարակուած մարդ չկա։ Այս միջոցը անուանւում է ցամաքային կարանտին։ Նոյն կերպ վարւում է իշխանութիւնը և այն նաւերի հետ, որոնք գալիս են մեր նաւահանգիստները (Բաթում, Բագու).— ճանապարհորդներին չեն թոյլ տալիս ափ իջնել, արգելում են նրանց նաւի մէջ ափից հեռու, մի յայտնի ժամանակով։ Սա ծովային կարանտինն է։

Իսկ երբ երկրի մէջ (օրինակ. որևէ նահանգում կամ գաւառում) երևան են գալիս խոլերայի դէպքեր, այդ ժամանակ հաստատւում է կօրդոն կամ շրջափակում, այսինքն. զօրքերը շրջապատում են այդ տեղը և չեն թոյլ տալիս բնակիչներին դուրս գալ, դէս ու դէն ցրուել և վարակումը տարածել հարևան գաւառները կամ նահանգները։

2. Կառավարութիւնը հոգս է անում նոյնպէս, որ հիւանդներին հանեն տներից և տանեն հիւանդանոց։ Այս միջոցը շատ կարևոր է նախ այն պատճառով, որ հեռացնում են տնից

վարակիչ թոյնը և դրանով ազատում են այդ տան միւս բնակիչներին վարակումից, և երկրորդ այն պատճառով, որ հիւանդին դնում է ասելի լաւ պայմանների մէջ բժշկութեան համար, որովհետև հիւանդանոցներում միշտ աւելի լաւ և հեշտ կարելի է բժշկել խոլերան, քան տանը։

3. Հիւանդին հիւանդանոց տանելուց յետոյ կամ երբ նա մեռնում է, պահանջւում է մաքրել և ախտահանել այն բնակարանը, ուր նա պառկած էր, և այն բոլոր իրերը, որոնց նա դիպել էր։ Ախտահանութեան նպատակն է ոչնչացնել այն կենդանի թոյնը, որը խոլերայի պատճառ է դառնում։ Սակայն միայն մաքրելը, որքան էլ նա խնամքով լինի կատարուած, չի կարող ազատել-ոչնչացնել այդ կենդանի թոյնը։

Մեծ քաղաքներում, ինչպէս Թիֆլիզում, Բագուում, Բաթումում, գոյութիւն ունեն առանձին հիմնարկութիւններ, որոնք կոչւում են ախտահանական կամերա և որոնց մէջ կատարւում է հիւանդին պատկանող իրերի ախտահանութիւնը։ Միւս քաղաքներում այս բանը պիտի կատարեն բժիշկները ու ֆելդշէրները։

4. Բացի այս բոլորից, խոլերայի կամ ժանտախտի համաճարակների ժամանակ պէտք

է յայտնել իշխանութեան, թէ ո՛րտեղ ո՛վ է հիւանդացել։ Այս պարտաւորութիւնը դրուած է ազգականների, տանտէրերի և հիւանդին խնամող բժշկի վրա։ Այս միջոցի նպատակն այն է, որ իշխանութիւնը կարողանա օգնութեան գալ հիւանդին և ժամանակին միջոցներ ձեռք առնէ, որ հիւանդութիւնը չտարածուի։

Ահա՛ թէ ինչեր է պահանջում կառավարութիւնը մեզանից մեր լաւութեան համար։ Ժողովուրդը պիտի գնահատի այն ամենը, ինչ արւում է նրա օգտի համար և պիտի օգնի կառավարութեան, որ գործադրուեն այդ միջոցները, և ոչ թէ ընդդիմանա այդ միջոցներին ինչպէս վերջին խոլերային համաճարակի ժամանակ արին միքանի նահանգներում տգէտ մարդիկ։

II. Ի՞նչ պէտք է անել, երբ խոլերան երևացել է հարեւան քաղաքներում եւ գիւղերում.

Երբ մի քաղաք կամ գիւղ լուր է առնում, որ խոլերան մօտենում է, բնակիչները պէտք է հաւաքուեն և միասին քննեն իրանց դրութիւնը։ Դրագէտները, օրինակ. ուսուցիչները, քահանաները պիտի ժողովրդի մէջ կարդան գրքոյկներ խոլերայի մասին և բացատրեն, թէ ի՛նչ օգուտ ունեն իշխանութեան և բժիշկների առաջարկած միջոցները։ Իսկ ժողովուրդը պարտաւոր է կատարել այդ բոլոր խորհուրդներն ու պահանջները, որովհետև ամեն ինչ արւում է ժողովրդի օգտի համար։

Ամեն մէկը պարտաւոր է զգոյշ լինել և չընդունել իր մօտ կասկածելի տեղերից եկածներին և առհասարակ չպիտի որևիցէ յարաբերութիւն ունենա նրանց հետ։

Փողոցները և տները պէտք է մաքուր պահել. ո՛չ-ոք չպիտի փողոցը կամ բակը գցի իր անմաքրութիւնները, իր գիբիլն ու աղբը, այլ պարտաւոր է հաւաքել արկղների մէջ և ամեն օր տանել քաղաքից կամ գիւղից դուրս և թաղել հողի մէջ, նշանակուած տեղերում։

Բնակիչների ունեւոր մասը, իր սեփական օգտի համար, պիտի օգնի աղքատ մասին, բաց անելով թէյարաններ, ձրի կամ էժանագին ճաշարաններ, հրաւիրելով բժիշկներ կամ ֆելդշերներ ժողովրդին ձրի բժշկական օգնութիւն հասցնելու համար։ Ես ասում եմ «իր սեփական օգտի համար», որովհետև պաշտպանելով աղքատներին վարակումից, հարուստ-

ները դրանով իսկ ազատում են և իրանց։ Ոչնչացնելով վարակի օջախները, հարուստները դրանով իրանց սեփական կեանքն են պաշտպանում։

III. *Ի՞նչ պէտք է անել, երբ վարակումը երևացել է քաղաքում կամ գիւղում։*

Խոլերան երբ երևում է մի տեղ, բնակիչները չպիտի սարսափահար լինեն և փախչեն, ընդհակառակը, ամենքը պիտի խմբուեն ընդհանուր թշնամու դէմ կռուելու համար։

Առաջին գործը պէտք է լինի հեռացնել հիւանդներին իրանց տներից և տանել հիւանդանոցները, յետո անհրաժեշտ է ախտահանել նրանց բնակարանները։

Իսկ եթէ այդ տեղում չկա հիւանդանոց և հիւանդը պէտք է թողնուի տանը, այդ դէպքում պէտք է ձեռք առնել հետևեալ միջոցները.

1). Հիւանդի դուրս գնացածը եւ փքսածները ո՛չ մի դէպքում չպէտք է փողոց կամ բակը թափել, այլ պէտք է հաւաքել առանձին ամանների մէջ և թափել առանձին խոր փոսերի մէջ, որոնք փորւում են բակում (ջրհորներից հեռու)։ Ամեն անգամ էլ այս աղտոտութիւնների վրա ամեն անգամ էլ պէտք է ածել թարմ հանգցրած կիր և չոր հող։ Աւելի լաւ կլինի անմաքրութիւնները տանել քաղաքից կամ գիւղից դուրս, թափել յատկապէս փորած փոսերի մէջ և նոյնպէս ծածկել կրով և հողով։

2) Չի կարելի խոլերայով հիւանդի սպիտակեղէնն ու շորերը լուանալ այն դեռում, որից բնակիչները ջուր են վերցնում։

3) Անհրաժեշտ է, որ հարևանները ո՛չ մի յարաբերութիւն չունենան վարակուածների հետ—ո՛չ իրանք գնան այնտեղ, ո՛չ էլ ընդունեն այնտեղից եկածներին։

Ծանօթութիւն։ Հիւանդատեսութեան կարելի է և անվնաս է գնալ միայն այն դէպքում, երբ զգուշութեան բոլոր անհրաժեշտ միջոցները ձեռք են առնում։ Այդ միջոցները սրանք են. հիւանդի տեսութեան գնացողը ներս մտնելու միջոցին իր շորերի վրայից պիտի հագնէ քաթանի երկար շապիկ (խալաթ), որը պաշտպանում է նրան հիւանդի վարակիչ արտաթորութիւններից. դուրս գալու միջոցին շապիկը պէտք է հանել։ Իսկ եթէ այցելուն շապիկ չի հագել, պիտի փոխի շորերը։ Չպէտք է դիպչել ո՛չ հիւանդին, ո՛չ էլ նրա իրերին։

Հիւանդի մօտից դուրս գալիս պէտք է լուացուել սապոնով ու տաք ջրով, և ապա մի որևէ ախտահանիչ դեղով, որի մասին ներքևում կխօսենք։

4) Ամեն մէկը պարտաւոր է իր առողջութեան վրա հսկել. հէնց որ մի ամենափոքրիկ տկարութիւն, փսխում կամ փորլուծութիւն ունենա, պիտի դիմէ բժշկին։

5) Չպէտք է թոյլ տալ ո՛չ մի չափազանցութիւն ո՛չ ուտելու, ո՛չ խմելու և ոչ էլ աշխատելու մէջ. իսկ միւս բաներում չպէտք է փոխել ապրուստի առաջուա եղանակը, եթէ նա կանոնաւոր է եղել։ Կերակուրը պէտք է հեշտ մարսուող լինի և չափաւոր։ Դժուար մարսուող կերակուրները, օրինակ. չափազանց իւղալիները, հում ընդեղէնները (բողկ, կաղամբ, շաղգամ, գազար), խոզի միսը, երշիկը (կալբաս) և առհասարակ ապխտած (ծխով չորացրած) մսեղէնները, վատ պանիրը, թթուած կաթն ու մածունը, խմոր հացը խիստ արգելուած են։

6) Հում մրգեր խոլերայի ժամանակ կարելի է գործ ածել միայն այն դէպքում, երբ լուացում են մաքուր, եփ տուած և սառցրած ջրի մէջ. աւելի լաւ է վերցնել մի թէյի

գդալ սալիցիլեան, կամ լիմոնի թթուա, խառնել մի շիշ ջրի մէջ և դրանով լուանալ մրգերը։ Իսկ եթէ չի կարելի այդ զգուշութիւնները գործ դնել, աւելի լաւ կլինի առժամանակ մրգեր բոլորովին չուտել։

7) Թոյլատրուած ուտելիքները, օրինակ. լաւ պանիրը, կարագը, խոզի ապուխտը պէտք է պահուեն ծածկուած ամանի մէջ կամ փաթաթուած մաքուր թղթում, որպէսզի ճանճերը վարակի թոյնը չնստեցնեն նրանց վրա։ Խորհուրդ ենք տալիս հացը, ուտելուց առաջ, միքիչ դնել տաք վառարանի մէջ կամ թէ նրա կտորները միքիչ պահել օջախի կամ սպիրտի լամպայի բոցի վրա. ծայրայեղ դէպքում պէտք է վերցնել վերևի կեղևը և մնացածն ուտել։

8) Ժողովրդի մէջ խօսք կա թէ սխտորը պահպանում է խոլերայով վարակուելուց, ուստի շատերը սխտոր են լցնում իրանց գրպանները և ուտում մեծ քանակութեամբ։ Այդ չպէտք է անել։ Այդպիսի քանակութեամբ սխտոր ուտելը վնաս է, որովհետև սխտորը գրգռում է ստամոքսն ու աղիքները, ծարաւ է առաջացնում և հարկադրում է շատ ջուրխմել։

9) Խոլերայի ժամանակ ամենալաւ խմե-

լիքը եռացրած և յետո սառցրած ջուրն է. ջրին կարելի է աւելացնել քիչ գինի կամ որևէ թթուտ (լիմոնի) կամ թթու սիրոպ (նռան, հոնի և ուրիշ)։ Աղային ջրերը (սոդային, սելտերեան) վնասակար են։ Պէտք է խուսափել շատ սառն խմիչքից, պաղպաղակից, սառը բրդոշից (ակրոշկա) և այլն։

10) Փորն ու ոտները պէտք է տաք պահել. չի կարելի քնել խոնաւ տեղ, պառկել խոնաւ հողի վրա։ Խորհուրդ են տալիս գործածել բրդէ կամ ֆլանէլի փորկապ։

11) Սովորած մարդիկ կարող են լողանալ գետում տաք եղանակին, եթէ միայն գետը չի անցնում քաղաքի վարակուած թաղերի միջով։ Լողանալ կարելի է միայն ուտելուց 3—4 ժամ յետո։

IV. Ո՞նչ պէտք է անել, երբ վարակումն ընկել է տունը

Երբ մի տան մէջ խոլերա է ընկել, անհրաժեշտ է, ինչպէս արդէն ասել են, հիւանդին տեղափոխել հիւանդանոց կամ լազարէթ։ Եթէ այդ բանն անկարելի է, պէտք է անից բոլոր միւս բնակիչներին հեռացնել. իսկ եթէ այդ էլ անհնար է անել, գոնէ պէտք է

հիւանդին մի առանձին սենեակում պահել, ուր ո՛չ-ոք չպէտք է մտնի բացի հիւանդապահից։ Յաւակցաբար մեր գիւղերում յաճախ տները միմիայն մի հացատնից են բաղկացած, որը թէ՛ խոհանոց է, թէ՛ ճաշարան, թէ՛ ննջարան և թէ ախոռ։ Այդպիսի բնակարանների մէջ, ի հարկէ, անհնար է առանձնացնել հիւանդին և այդ դէպքում միայն բաւականանալ, որքան կարելի է, մաքրութիւն պահելով. հեռացնել փսխածն ու դուրս գնացածը և ախտահանել այն ամենը, ինչի վրա որ ընկել են այդ աղտոտութիւններից։ Հիւանդին խնամելու համար նրա մօտ պիտի մէկը մնա (առհասարակ մայրը կամ կինը)։ Այս հիւանդապահը նոյնպէս կարող է հիւանդանալ, եթէ նա խստօրէն չի պահպանի հետևեալ բոլոր զգուշութիւնները։ Նա հիւանդի մօտ մրտնելուց առաջ պիտի հագնի վերև յիշած շապիկը և դուրս գալիս հանի, չպէտք է երբէք բան ուտի կամ խմի այդ սենեակում, իսկ ուրիշ սենեակում էլ հացի նստելուց առաջ անպատճառ պիտի լաւ լուանա ու ախտահանի իր ձեռները ու երեսը (տե՛ս ախտահանիչ միջոցներ), իսկ բերանը միքանի անգամ ողողի բորային թթուտի խառնուրդով (մի թէյի գդալ

մի բաժակ տաք ջրի մէջ հալեցրած ու սառեցրած)։ Իր անձի մասին հիւանդ պահողը նոյնպէս պէտք է ամենախիստ մաքրութիւն պահպանի։ Այդ զգուշութիւններով նա կարող է հիւանդի մօտ լինել ու խնամել նրան առանց ինքն էլ հիւանդանալու։

V. Ո՞նչպէս խնամել հիւանդին

1) Հիւանդին պէտք է պառկեցնել ամենամեծ, ամենամաքուր ու լոյս սենեակի մէջ։ Այդ սենեակից պիտի դուրս տարուած լինեն այն ամէն իրերը, որոնք անհրաժեշտ չեն. այն է կահ-կարասիները (մանաւանդ փափուկները), գորգերը, վարագոյրները, նկարները, գրքերը և այլն) ու թողնել միմիայն երկու մահճակալ (մէկը հիւանդի, միւսը նրան խնամողի համար), մի սեղան, աթոռներ և ամենակարևոր իրերը։

2) Հիւանդի սենեակը պէտք է օդափոխել օրական միքանի անգամ։ Սենեակը պէտք է տաք լինի (15—16 աստիճան Բէօմիւրի ջերմաչափով)։

3) Հիւանդի արտաթորածն ու փսխածը պէտք է հաւաքել առանձին ամանի մէջ (գարշօկ), ծածկել կրով կամ մի որևէ ախտահանիչ դեղով ու դուրս տանել։

4) Ցատակն ու կարասիքը, եթէ սրանք կեղտոտած են արտաթորութիւններով կամ փսխանքով, պէտք է մաքրել սպունգով կամ շորով, որ պէտք է թաթխած լինի կարբոլեան թթուտի կամ սուլեմայի լուծուածքների մէջ։ (Տ. ներքև գլ. VIII)։ Եթէ յատակը հողից է, պէտք է կեղտոտած տեղի վրա խոկոյն նոր հանգցրած կիր ցանել։

5) Աղտոտած սպիտակեղէնը, լուացքի տալուց առաջ, պէտք է հաւաքել մի կաւէ կամ փայտէ ամանի մէջ, որի մէջ լցրած պիտի լինի մի որևէ ախտահանիչ դեղ։ Այս սպիտակեղէնը չպէտք է խառնել ուրիշների հետ, այլ բոլորովին առանձին լուանալ ու որքան կարելի է երկար ժամանակ եփ տալ սոդա կամ մի ուրիշ աղ պարունակող ջրի մէջ։

Ծանօթութիւն։ Լուացած սպիտակեղէնն ու շորեղէնները գիւղերում կարելի է կախել թոնրի մէջ ու չորացնել։

6) Երբ հիւանդը լաւանա կամ մեռնի, նրա անկողինն ու սպիտակեղէնը լաւ է այրել, այս պատճառով էլ աղքատ ընտանիքներում կարող են դոշակները խոտով լցնել։

7) Եթէ հիւանդը մեռնի, դիակը պէտք է փաթաթել սաւանի մէջ, որը պիտի թրջուած լինի սուլեմայով կամ կարբոլեան թթուտի խառնուրդով (կարբոլաջրով)։ Դագաղը պէտք է մեխած և, որքան կարելի է, խոր թաղել և վրայից լցնել մի հատ շերտ հանգցրած կիր։

VI. Ի՞նչ պէտք է անել մինչեւ բժշկի գալը

Մենք ասել ենք որ խոլերայի ժամանակ ստամոքսի ամեն տեսակ խանգարումները պէտք է լուրջ կերպով բժշկել։ Այս պատճառով ամեն կասկածելի դէպքում իսկոյն պիտի բժշկի դիմել։

Մեր կողմից տալիս ենք հետեւեալ խորհուրդները.

1. Հիւանդին իսկոյն անկողին պառկեցրէ՛ք, փորին մանանեխ (горчичникъ-sinapisme) դրէ՛ք, կամ դրէ՛ք կանեփի սերմից փաթեթ, կամ թէ չէ մի պարկ, որի մէջ լցրած լինի տաքացրած աւազ կամ թեփ (օր. փայտի մանրունք, որ սղոցելուց է գոյանում)։ Ժողովուրդը սիրում է տաքացրած ադուռ ու խոտ. դրանք էլ լաւ են։ Կարելի է նոյնպէս հիւանդի ոտերի արանքն ու կողքերին եռման ջուր լցրած շիշեր շարել, որոնք պէտք է փաթաթուած լինեն մաքուր շորով։

2. Եթէ հիւանդը փսխում է կամ լուծ ունի, տուէ՛ք խմելու շաքարաջուր լիմոնի կամ նռան հիւթով, իսկ աւելի լաւ կլինի, եթէ խմեցնէք նրան մի բաժակ ջուր, մէջը կաթացրած 10—15 կաթիլ աղաթթուտ (соляная кислота, acidum muriaticum)։ Եթէ փսխելը չի դադարում, կոտոր-կոտոր սառուց տուէք կուլ տալու. իսկ եթէ այդ էլ չի օգնում և աւելի ևս, եթէ լուծ էլ է սկսում, պէտք է տալ Բօակինի կամ Ինոզեմցեվի կաթիլներ (հասակաւորին 20—25 կաթիլ—ջրով երկու-երեք ժամը միանգամ. իսկ եթէ փսխելը յաճախ է կրկնւում, նոյնիսկ ժամը մի անգամ. տ. ներքև)։

3. Եթէ հիւանդի ոտերն ու ձեռները ձգձգւում են (որ մեծ ցաւեր է պատճառում նրան), պէտք է ցաւող անդամը մերսել մի կոտոր ֆլանելով կամ կոշտ մահուդով։ Կարելի է մերսել նոյնպէս և մի կոտոր շորով, որ պէտք է թաթախել մանանեխի կամ քաֆուրի սպիրտի մէջ։

4. Շնչարգելութեան ու սրտի բաբախման դէմ գործ են ածում Վալերիանի և Հօֆֆ-

մանի կաթիլներ (15—20 կաթիլ օրական միքանի անգամ). իսկ նուազութեան և ուշագնացութեան դէմ, բացի այդ, պէտք է նաշատրի ոգիով (нашатырный спиртъ) հոտ տալ քթին։

5. Եթէ հիւանդի անդամները սառել են, պէտք է տաքացնել տաք ջրի շիշերով, ինչպէս ասացինք վերևը։

6. Երբէք չպէտք է ականջ դնել հէքիմներին ու պառաւներին, որոնք իրանց տգէտ խորհուրդներով ու վնասակար միջոցներով կորցնում են ժողովրդին։ Օրինակ, նրանք հիւանդից արիւն են առնում, այնինչ այդ չափազանց վնասակար է, որովհետև աւելի ևս թուլացնում է հիւանդին և ուղղակի կարող է սպանել նրան, քանի որ առանց արիւն առնելու էլ հիւանդը շատ ջուր է կորցնում լուծելիս ու փսխելիս և նրա արիւնն արդէն թանձրացած է։ Պէտք է խոյս տալ նմանապէս և զանազան պառաւական բոյսերից ու «քօլերից», որոնցից միայն վնաս կա և երբէք օգուտ։ Օրինակ, անցեալ 1902-ի համաճարակի ժամանակ մեծ վնաս հասցրեց ժողովրդին Ալեքսանդրապօլում մի զինուորականի գոված «Կալգան» բոյսը, որը, այդ պարոնի ասելով, իբր թէ, «հաստատ դեղ» էր խոլերայի դէմ։

VII. Դեղերը, որ պէտք է գտնուեն ամեն տան մէջ հիւանդացողին օգնելու համար։

1. Բօակինի կաթիլներ։
2. Ինոզեմցեվի կաթիլներ։
3. Վալերիանի կաթիլներ։
4. Հօֆֆմանի կաթիլներ։
5. Եզրեղիի կամ դափնի կեռասի կաթիլներ (лавровишневыя капли).
6. Դեղարանական աղաթթուտի խառնուրդ (разбавленная аптечная соляная кислота)։
7. Քաֆուրի կամ մանանեխի սպիրտ։
8. Նաշատրի սպիրտ, օդեկոլոն, քացախ։

Այս դեղերի սրուակների վրա պէտք է պարզ գրուած լինեն դեղերի անունները և գործածելու ձևը։

Ի հարկէ երբէք չպէտք է յոյս դնել այս դեղերի վրա, այլ հիւանդութեան դէպքում անմիջապէս և իսկոյն ո՛չ մի բոպէ չկորցնել ու դիմել բժշկին։

VIII. *Ախտահանութիւն կամ թոյնի ոչնչացնելու միջոցը։*

Խոլերահիւանդի առողջանալուց կամ մահանալուց յետո պէտք է ոչնչացնել վարակիչ թոյնը։ Դրա համար հարկաւոր է բնակարանը ախտահանել։

Ինչպէս արդէն ասել ենք, միքանի քաղաքներում կան առանձին հիմնարկութիւններ, որոնք այդ գործով (ախտահանելով) են պարապած, իսկ գիւղերում ժողովուրդն ինքը պիտի այդ անի։

Այս գրքոյկի մէջ զանազան տեղերում մենք խօսել ենք բնակարանի և իրերի ախտահանութեան մասին, այժմ առաջ բերենք այն միջոցները, որոնք պէտք է գործ դնել ախտահանութեան համար։

1. Կրակը անտարակոյս ամենազօրեղ ախտահանիչն է։ Երբ մենք այրում ենք մի վարակուած առարկա, թոյնն էլ ի հարկէ, հետն է այրում-ոչնչանում։ Բայց քանի որ աղքատ ժողովուրդը կափսոսա այրելու հիւանդի իրեղէնները, այդ ձևը ամենքին ձեռնտու չէ։

2. Կիր։ Սա ամենաէժան և ուրեմն ամենքին ձեռնտու միջոցն է բնակարանները ախտահանելու համար։ Կիրը գործ է ածւում երկու ձևով—չոր կամ ջրախառն։ Բայց կիրն էլ շատ տեղերում դժուար է ձեռք ընկնում, ուրեմն ամեն գիւղ պէտք է վաղօրօք պաշար պատրաստի։ Կիրը լցնում են հիւանդի արտաթորութիւնների վրա, մեր գիւղական տների հողէ յատակի վրա, բակերը և առհասարակ վարակուած տեղերը։

Երբ կիրը բաց են անում ջրի մէջ, ստացւում է կաթնանման հեղուկ, որը կոչւում է կրի կաթ կամ կրակաթ։ Կրակաթ պատրաստելու համար պէտք է մի մաս կիր բանալ հինգ մաս ջրում։ Այդ հեղուկը լցնում են անմաքրութիւնների վրա և ածում են արտաքնոցները։

3. Քլորակիր։ Գործ է ածւում, ինչպէս հասարակ կիրը։

4. Սուլֆամա։ Սա մի զօրեղ թոյն է, որ միայն բժշկի դեղատոմսով են դուրս թողնում դեղատներից, ուրեմն պէտք է շատ զգոյշ վարուել նրա հետ։ Ախտահանութեան համար գործ են ածում զանազան լուծուածքներ (1 մաս սուլֆամա—500 մ. ջուր, կամ 1 մաս

սուլեմա 1000—2000 ջուր)։ Այս լուծուածքով լուանում են սենեակի պատերը առաստաղը, յատակը, կահ-կարասիները և ուրիշ առարկաներ։ Առհասարակ սուլեման մեծ ցրցիրներով (шприцъ) ջրջնքում են ախտահանելի իրերը։

5. Կարբոլեան թթուտ կամ կարբոլա։ Այս դեղից էլ զանազան լուծուածքներ են շինում։ Վերցնում են 2—5 մաս թթուտ և հալեցնում են 100 մ. ջրի մէջ։ Այս լուծուածքով ախտահանում են հիւանդի կեղտոտած բոլոր իրեղէնները կամ լուանում են իրանց ձեռներն ու երեսը։ Կարբոլեան թթուտի թունդ լուծուածքները (օր. 5 մ. 100 մ. ջրի մէջ) նոյնպէս գործ է ածում օդը մաքրելու համար պուլվերիզատորների (փչող գործիքների միջոցով։

6. Լիզոլ։ Սա մի թանձր մուգ գոյնի հեղուկ է, որը խառնում են ջրին ու գործ ածում իբրև ախտահանիչ դեղ։ Բաւական է մի մաս լիզոլ հալեցնել 100 մ. ջրի մէջ և կատանաք լաւ դեղ ախտահանութեան համար։

7. Պղնձի և երկաթի արջասպ, քլոր և ֆորմալին։ Սրանցից ամենաուժեղը պղնձի արջասպն է, որից պատրաստում են 2% տոկոսային լուծուածք (2 մ. արջասպ 100 մաս ջրում)։ Երկաթի արջասպը շատ աւելի թոյլ է և նրանից պէտք է վերցնել 15 մաս 100 մաս ջրում։ Երկու արջասպներն էլ գործ են ածում հիւանդի փսխանքներն ու դուրս գընացածը ախտահանելու համար։

Սպիրտը նոյնպէս մի լաւ միջոց է, բայց թանդութեան պատճառով մեծամասնութեանը անմատչելի է։ Իսկ արաղը չափազանց թոյլ է և պէտք չի ախտահանելու համար։

8. Մի դեղ էլ կա—դա ֆորմալինով ծուխ տալն է։ Նրանով ախտահանում են բնակարանները։

Երբ կամենում են այս դեղով ախտահանել բնակարանը, պէտք է լաւ ծածկել լուսամուտները, դռները և բոլոր ծակերը, որ ծուխը (գազերը) դուրս չգան բնակարանից։ Երբ-որ բաւականին ծուխ է դոյացել ֆորմալինի այրելուց ու սենեակը միքանի ժամանակ ծուխով լիքն է եղել, բաց են անում դռները ու լուսամուտները և մաքրում օդը։

Պարտք եմ համարում զգուշացնել, որ ժողովրդի մէջ բոլոր գործածուող դեղերը, կայա-

բանի միջի վատ հոտը իբր թէ ոչնչացնելու համար, ոչ միայն չեն մաքրում օդը, այլ ընդհակառակը, աւելի ևս կեղտոտում են օդը և երբէք չեն կարող սպանել խոլերայի վարակիչ թոյնը։

ՎԵՐՋ

«ԱՌՈՂՋԱՊԱՀԻԿ ԹԵՐԹ»

Կիսամսեայ նկարազարդ հանդէս 4—6 նոյնպէս նկարազարդ գրքոյկներով.
Տարեկան բաժանորդագինն է 2 ռ. 50 կ.
Արտասահմանում. . 10 ֆր. կամ $3^1/_2$ ռ.
Հասցէն. Тифлисъ, редакція «Арогджапаик Терт»
Արտասահ. Tiflis. Redaction «Arogdjapaik Tert»

Դ-ր Վ. Արծրունու հրատարակութիւններ.

1) Ժանտախտ (մի քանի օրինակ միայն) 20 կ.,
2) Խոլերայի մասին (սպառ.), 3) Խոլերա (սպառ.)
4) Հիպնոտիսմ, հատ. I. (սպառուած) 25 կ.
5) Հիպնոտիսմ, հատ. II. 15 կ., 6) Դպրոցական առողջապահութիւն (պատկերազարդ) 50 կ.
7) Առողջ երեխաների խնամատարութիւն 25 կ.
8) Սիֆիլիս, Կակուղ շանկր, Սուսունակ 25 կ.
9) Թշուառների բարեկամ բժիշկ Հատ 20 կ.
10) Ամուսնութիւն . . . . . 75 կ.
11) Աղջիկ (առողջ. և բարոյագիտակ. էտիւդ) 75 կ.

ԲԺՇԿԻ ԳՐՈՒՅԿԵՐԸ

№ 1. ՄԻ ԽՄԻՐ, երկ. տ. (նկարներով) 5 կ.
№ 2. ՎԱՏ ՅԱՒ (նկ. սպառուած) 6 կ.
№ 3. ՎԱՐԱԿԻՉ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՆՐԱՆՑ ԹՈՅՆԸ (23 նկ.) 15 կ.
№ 4. ԹՈՔԱԽՏԿԱՄ ԲԱՐԱԿԱՅԱՒ (նկ.) 10 կ.
№ 5. ԴՈՂԷՐՈՅԹ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ (նկ.) 5 կ.
№ 6. ԻՆՖԼՈՒԷՆՅԱ ԿԱՄ ՆՈՐ ՅԱՒ (նկ.) 3 կ.
№ 7. ՄԻ ԾԽԻՐ . . . . . 5 կ.
№ 8. ՆՈՐԱԾԻՆ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ (նկ.) . . 5 կ.
№ 9. ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ, երկրորդ հրատարակ. Ա. մասն (9 նկ.). 20 կ.
№ 10. ՎԱՏ ՅԱՒ ԿԱՄ ՍԻՖԻԼԻՍ Բ մասն 15 կ.
№ 11. ԾԱՂԻԿ ԵՒ ՊԱՏՈՒԱՍՏ . . . 15 կ.
№ 12. ՅՂԻ ԿՆՈՋ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹ. 10 կ.
№ 13. ԽՈԼԵՐԱՅԻ ՄԱՍԻՆ . . . . 15 կ.

Կայ են տեսել «Բժշկի թերթիկներ» № 1 Մի՛ խմիր» № 2 «Նուէր ծնողքներին» մասն. 100-ը 1 ռ.։ Դիմել խմբ.

Հեղինակի հասցէն. Тифлисъ, Д-ру В. М. Арцруни.

6691